

հիները: Այստեղ մաղթանք է կատարուում և դրանով վերջանում տօնախմբութեան առաջին մասը:

Երեկոյեան Պետերբուրգի դումայում հանդիսաւոր նիստ է տեղի ունենում, որտեղ քաղաքագլուխ Լեյքանովը մի առ մի թւում է Պետերբուրգին հասած արքայական ողորմածութիւնները՝ սկսած Պետրոս Մեծից. այնուհետև խօսում են Վանազան հիմնարկութիւններից և օտար ու գաւառական 67 քաղաքներից եկած պատգամաւորները. ի միջի այլոց խօսում են նաև Բեռլինի բերդերմայստերը (քաղաքագլուխ) և Փարիզի քաղաքային վարչութեան նախագահը:

Ի յիշատակ Պետերբուրգի 200 ամեայ տօնախմբութեան պատրաստուած են մի քանի հազար մեղայիներ, որոնց մէկ կողմում նկարուած են Մեծն Պետրոս և Նիկողայոս II կայսրները պատկերները. իսկ միւս կողմում՝ Ռուսաստանը ներկայացուած է իբրև մի կին՝ Թագը գլխին, որի վրայ բարձրից արևի ճառագայթներ են ընկնում:

Ս. ԷՋՄԻՇՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Բագուարնակ պ. Դաւթ Իւզբաշեանը հանդուցեալ Աւերիցեանի մատենադարանը գնելով նուիրել է ս. Էջմիածնին. մի և նոյն ժամանակ 15,000 ռուբլի նուիրել է Էջմիածնի մատենադարանի առանձին մի շէնք կանգնելու այնտեղ: Իւր այս նպատակի իրագործումը պ. Իւզբաշեանցը յանձնել է բարձր. Տ. Մեսրոպ պարգապետին, որ յատակագիծը պատրաստել է տուել արդէն և այս օրերս կձեռնարկէ շինութեան:

ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ՄԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԸ

Ապրիլ ամսի 20 ին Սիս քաղաքում տեղի է ունեցել Կիլիկիայի նորընտիր կաթողիկոս Ս. Սահակ Խաբայեանցի օծումը՝ չորս եպիսկոպոսների, տասնեակ վարդապետների, բազմաթիւ քահանաների և բիւր ժողովրդի ներկայութեամբ: Թէև Սոյ մայր տաճարը բաւականին ընդարձակ է, բայց ամեն կողմից եկած ուխտաւորներին գոհացումն տալու նպատակով Ս. կաթողիկոսի օծումը կատարուել է եկեղեցու բակում. տեղացիների ասելով՝ երբէք Սիս այդչափ բազմութիւն չէր հաւաքուել: Հանդիսաւոր պատարագի միջոցին կաթողիկոսը սեղանի մէջ տեղը ծունկ է չոքում, իսկ Պատրիարքարանի պատուիրակ և հրաւիրակ Տ. Մովսէս եպիսկոպոս Կէօմրիւքճեանը արծաթապատ աղաւնու կտցից միւռոնի կաթիլներ թափելով նրա գլխին՝ օծում է նրան կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, որի միջո-

ցին խուռներամ բազմութիւնը իւր հրճուանքը ծափահարութիւններով է արտայայտում: Օծեալը բոլորէ վեհութիւնից զգացուելով արտասուքի կայակներ է հոսեցնում: Կէօմբիւքնեան սրբազանից յետոյ, Ս. Կաթողիկոսին օծում են նաև Կիլիկիայի երեք ծերունազարդ եպիսկոպոսները: Այնուհետև եպիսկոպոսները օծում են նաև կաթողիկոսի բթամատի ներսի մասը, յետոյ Պատրիարքարանի պատուիրակը հայրապետական մատանին դնում է Ս. Կաթողիկոսի մատը, ձեռքն է տալիս հովուապետական ոսկեղէն գաւազանը եւ սր. Աւետարանը, ապա կոնքեռը դնում է նրա ձախ ազդրի վրայ: Վերջը Կէօմբիւքնեան սրբազանը թանկագին ու նրբահիւս քողով ծածկում է կաթողիկոսի գլուխը: Այս արարողութիւնների միջոցին բազմութիւ հանդիսականները շարունակ ծափահարելիս են եղել—մեր կարծիքով բոլորովին աւելորդ եւ նոյն իսկ անպատշաճ գործողութիւն՝ եկեղեցական արարողութեան ժամանակ—, իսկ չորս լուսանկարներ նկարել են այդ հանդիսաւոր վայրկեանների գործողութիւնները: Նրբ սեղանի վրայ գտնուող եպիսկոպոսներն ու հոգեւոր պաշտօնեաները համբուրում են օծուած կաթողիկոսի գլուխն եւ աջ ձեռքը, նորապսակ Հայրապետը շարունակում է սբ. պատարագի արարողութիւնը, Յիշատակութեան միջոցին Ն. Ս. Օծութիւնը յիշում է Կիլիկիայի հանգուցեալ կաթողիկոսներին եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտտիչ Ա.ին: Պատարագի վերջը չբեղ եւ հանդիսաւոր թափորով Օծեալին առաջնորդում են վեհարան: Ատանայից եկած երգեցիկ խումբն այդ միջոցին երգում է Ս. Կաթողիկոսին նուիրած երգը, Վեհարանում ժողովուրդն արժանանում է Նորին Օծութեան աջը համբուրելու եւ 35 ոսկի աջահամայր է նուիրում: Հենց այդ ժամանակ բազմութիւ հեռագիրներ են տեղում ամեն կողմից եւ շնորհաւորում Տ. Սահակ կաթողիկոսի օծումը: Նոյն օրը, երեկոյեան ժամին տեղի է ունեցել Ն. Ս. Օծութեան գլխի քօղը վերցնելու արարողութիւնը, որ դարձեալ կապուած է մի անպատշաճ սովորութեան հետ. վարդապետներից մէկն սկսում է սակարկել թէ ով շատ կտայ, նա կլինի Լիքահայրը, քօղը վերցնողը. ամենից շատ, այսինքն 23 ոսկի է տալիս մի տիկին եւ վերջինիս 12 տարեկան որդին վերցնում է հայրապետի գլխի քօղը—Սրանի թէ այս դրամական սակարկութիւններ անելու տգեղ սովորութիւնն օր առաջ վերանար մեր սրբաւայրերից—:

Նորին Օծութիւն Սահակ կաթողիկոսը չէ հետեւել իւր նախորդի օրինակին եւ վեղարի վրայ ադամանդեայ խաչ չէ չինել տուել՝ համարելով այդ օտարամուտ սովորութիւն. մեր սբ. նախահայրերն այդպիսի սովորութիւն չեն ունեցել:

Հետեւեալ կիրակի օրը, Ապրիլի 28-ին, Ն. Օծութիւն Սահակ կաթողիկոսը սբ. Միւռոն է օրհնել՝ դարձեալ ուխտաւորների ահագին բազմութեան ներկայութեամբ:

Երբ այդ հանդիսաւոր օրերը կանցնեն և նորընտիր Ս. կաթողիկոսը փոքր ինչ կհանգստանայ, յուսով ենք, որ հետգհետէ բերկրառիթ լուրեր հաղորդելու կարելութիւն կունենանք Կիլիկիայի վիճակի մասին, որովհետեւ, ինչպէս ընթերցողը կտեսնէ «Լուսնայ» ի միւս համարում տպուելիք մի ուրիշ յօդուածից, շատ խեղճ վիճակի մէջ է Կիլիկիան՝ կրթական տեսակէտից, որովհետեւ միմիայն *Եօթն* անշաւ տարրական դպրոցներ ունի իր ընդարձակ սահմաններում: Ս. Սահակ կաթ. վայելում է թէ Կիլիկեցոց և թէ ամբողջ ազգի յարգանքները. ուստի լիայոյս ենք, որ Նորին Օծութիւնը ամենայն աշխրջութեամբ մի շարք բարեկարգութիւններ կմտցնէ իւր վիճակում: Ամեն տեղի հայերի վրայ էլ պարտք կայ՝ նիւթապէս օժանդակելու Կիլիկիայի հովուապետի կրթական և շինարար ձեռնարկութիւններին: Կիլիկիան ամեն յարմարութիւններ ունի՝ մի ծաղկեալ քաղաքակրթութեան փոքրիկ կենդրոն դառնալու ցրուած հայ ժողովրդի համար:

ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏ- ՐԻՈՐՔԱՐԱՆԻ

Եկեղեցասէր մի անձնաւորութիւն, նպատակ ունենալով եկեղեցականութեան և ժողովրդեան հաւասարապէս օգտակար լինել, առաջինին քարոզի նիւթը ուսումնասիրելու և պատրաստելու առիթ ընծայելով և վերջինին ալ քարոզի գիրք մը մատուցանելով, որոշած է գրուած քաղաքներու մրցում մը բանալ, և ընտրելագոյն քարոզներէ հատոր մը հրատարակել ի պէտս հաւատացելոց:

Մրցման կրնան մասնակցիլ ամեն եկեղեցականք. որք էայ. Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ պաշտօնեայ են, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, մինչև սարկաւազները, և որք դատաւարտութեան մը ներքև չեն գտնուիր:

Քարոզ գրողները պէտք է ծածկանուենով մը նշանակուին կամ ստորագրեն և միանգամայն կնքեալ պահարանի մը մէջ իրենց բուն անունը գրեն և պահարանին վրայ իրենց ընտրած ծածկանունը նշանակեն և միասին դրկեն: Այդ պահարանները պիտի բացուին քննութեանց աւարտելէն յետոյ, և հրատարակութեան առթիւ միայն պիտի ծանուցուին հեղինակաց անունն. ներքև:

Լաւագոյն քարոզները գրողներու համար սահմանուած մրցանակներն են, առաջին մրցանակ 500 ֆրանկ, երկու երկրորդ մրցանակ 200 ֆրանկ իւրաքանչիւրը, չորս երրորդ մրցանակ 100 ֆրանկ իւրաքանչիւրը, չորս չորրորդ մրցանակ 50 ֆրանկ իւրաքանչիւրը, և վեց հինգերորդ մրցանակ պարզ գո-